բավորում Գեղարդի վիմափորի քանդակը, դժվար է պնդել, բայց անշուշտ խմաստ ունի այս խմբակցությունը։

Ինչ վոր ասացինք Պռոշյան այս քանդակի մաս կազմող կենդանիների և թռչունի համար՝ յեղան գլուխը, շղթայված առյուծներն իրար դեմ, արծիվը մագիլների մեջ խոյով կամ զույգ պարիկները, նույնը կարող ենք ասել և մնացածների համար, ինչպես վիմափոր տաճարի քոշն և, վորի թևավոր որինակն ունինք Յեղվարդի Ս. Յակոբի հյուսիսային լուսամուտի գլխին, իսկ ավելի վաղ սասանյան արծաթի գործերի (պատկ. 77) մեջ*, Թանատի վանքի հարավային պատի աղավնին պատռող բազեն, հար և նման Աղթամարին, յեղան գլուխը, զույգ սիրամարգները կաթուղիկեի թմբուկի վերայ*։ Այսպես են և յերկրաչափական, հիւսկեն քանդակները, վարդյակները **, արմավենիները, սրածայր կամարներով պատրհանները իրենց զարդերով Պռոշյան ժամատան մեջ (պատկ. 78)[1], կրկնված նման փոփոխակներով նաև մահմեդական ժամանակակից արվեստի մեջ, խաչքանդակների զարդերը, վոմանք միայն ավելի հին ավանդները պահած, ինչպես վիմափոր գավթի գեղանկար խաչը (պտ. 43. 44. 49. 34.)։ Սրանք բոլորը մեզ համար հասկանալի յեն իբրև ԺԳ. դարու հայ արվեստին հատուկ մոտիվներ, կամ իբրև մաս ընդհանուր հասանքի։

Ը.

ԵԱՉԻ (1299—1317)

Ամիր Հասանի և Թաճերի վորդին եր Եաչոն կամ Եաչին, վորի գործունեության նկարագրության անցնելուց առաջ, հարկավոր է պարզել մի խնդիր, վոր մեր բանասերներին շփոթության մեջ է ձգել։ Զալալյան (Բ. 148) և Քաջբերունի (Ար. 1890. 339) Եաչի անունով մի իշխան են ընդունում, վորպես Պռոշի կամ Պապաքի վորդի, վոր սխալ է. աղբյուրների ուսումնասիրությունը պարզում է, վոր Եաչի անունով մի իշխան է միայն յեղել այս ժամանակ և նա Պռոշի թոռն է, Ամիր-Հասանի վորդին։ Այս սխալի պատճառն այն է, վոր Եաչին մի քանի արձանագրությունների մեջ յիշված է Պռոշի վորդիների շարքում. զոցանից հնագույնը Թանատի վանքի 1273 թվի արձանագրությունն է (Հավելված. Ա. 18.). «յարիական և քաջատոհմ իշխանության Պռուշայ և որդւոցն Պապաքին, Հասանայ, մանկանն Էաչոյ շինեցաւ սուրբ եկեղեցիս». յերկրորդ անգամ հիշվում է Մարտիրոս գյուղի վիմափոր յեկեղեցու Մատթեոս վարդապետի արձանագրության մեջ 1286 թվին (Հավել. Ա. 23, պատկ. 56). այստեղ, ի հարկե, բոլորովին պարզ է, վոր Եաչին Հասանի վորդին՝ «Եւ ի տրութեն իշխանաց իշխանին Պռոշոյ և որ/(զոց նոր)ին Պապաքին եւ Հասանա եւ որ/(զոյ) նորին Էաչո և մաւր նորին / Թ(աճ)երոյն . . .»՝ բայց Զալալյան սխալ է կարդացել, (Բ. 201), ուստի և չե պարզվել նորա համար խնդիրը։ Յերրորդ անգամ Պապաքի և Հասանի հետ հիշված է Եաչին Թանահատի մի յերկրորդ՝ Խութլու բեկի՝ արձանագրության մեջ (եջ. 141. Հավել. Ա. 18բ.), ինչպես պարզել ենք 1284 թվից՝ Պռոշի մահվանից հետո գրված։ Վերջապես չորրորդ անգամ հիշված է Արկազու Ս. Խաչի մի թերի արձանագրության մեջ, վոր բերում է Զալալյան[2]. «Եւ ամենավեհ իշխանի Պռոշոյ եկեղեցիս և մանկան Էաչոյ և մեծահաւատ տիկնոջ Խոտանայ, յորժամ տէր էր տեղւոջս»։

Զուտենայինք ուրիշ աղբյուրներ, քան այս արձանագրությունները, այն էլ մեր նախորդների սխալ ընթերցումներով, արդարև ուրիշ յեղրակացություն Եաչիի մասին դժվար եր հանել. սակայն, տեսանք, վոր այդ արձանագրություններից մեկը՝ Մատթեոս վարդապետինը, պարզ և մեկին կերպով հայտնում է, թե Եաչին Հասանի և Թաճերի վորդին է. նույնը հաստատում են Եաչիի յերկու արձանագրությունները, մեկը յուր շինել տված Խոտակերաց Ս. Նշանի պահարանի հետևում (պատկ. 79)[3], մյուսը Սպիտակավոր Աստվածածնի հյուսիսային պատի վերա ներսից (պատկ. 80). նույնը տեսանք պարզ հաստատված Թաճերի (եջ. 147—153) և Շմավոն գրչի Ոծոփի վանքում 1292 թ. գրված հիշատակարանների մեջ։ Բացի զոցանից, Որբելյան, վոր ժամանակակից է, քանիցս խոսում է Եաչի իշխանի մասին, վոր յուր փեսան եր, Ելիկում Որբել-

* Смирнов. Восточное Серебро. պատկ. 88. Սասանյան վոսկերչական գործերից մեր ցուցադրած պատկերները 65, 76. 77. առնված են Լենինգրադի Երմիտաժի սասանյան ժողովածուներից, լուսանկարները հոդացել է ինձ համար ներկա վարիչ պրոֆ. Հովսեփ Որբելին, վորին և հայտնում ենք սրտանց շնորհակալություն։ Անիի հյուսիսային պարսպի վաղ առյուծը խաչով առնված է Անիի շարքից, վոր հրատարակված է ակադեմիկ Մառի կողմից կամ նրա խմբագրությամբ։

* Bachman. Tafel. 34.

** Համ. Strzygowski. Altai—Iran պատկ 138.

1 Սրա նկարագրությունը տես եջ 114. մեզնից անկախ պատճառով պատկերը յուր տեղում դնել չկարողացանք տպագրության ժամանակ։

2 Բ. 134

3 Տես և Գեղարվեստ № 4. Գրչութեան Արուեստը Գ. § 24, Տախտ. ԺԶ։